ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԼԻԲԵՐԱԼ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հ. Ա. ՀԱՄԲԱՐՁԱՆ

XX դարի սկզբին հողային հարցը ինչպես Ռուսաստանում ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում հանդիսանում էր հասարակական-քաղաքական շարժման հիմքը, հասունացող հեղափոխության գլխավոր խնդիրը։

Հայ լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսները, լինելով հասարակական հարաբերությունների աստիճանական փոփոխության կողմնակիցներ, կամենում էին արևելահայ հողային խնդիրը վճռել ցարական կարգերի պահպանության պայմաններում։ Ուստի դրական էին վերաբերվում կառավարության հրատարակած հողային բոլոր կամ համարյա բոլոր ռեֆորմներին, գտնելով, որ նրանք կբարեփոխեն նաև հայկական գյուղական կյանքը։ Այսպես, արևելահայ լիբերալների գլխավոր օրգան «Մշակը» օգտակար համարեց ինքնակալության 1900 թ. մայիսի 1-ի օրենքը, որով իրավապես ձևակերպվում էր Անդրկովկասում գոյություն ունեցող հողատիրության ու հողօգտագործման փաստական վիճակը, թույլատրելով, սակայն, փոխարինել գյուղացիների հողի համայնական օգտագործումը ծխականով, եթե դրա օգտին քվեարկի գյուղի բնակչության 2/3-ը։ «Մշակը» գտնում էր, որ այդ օրենքով «որոշ ձև է ստանում մի կարևոր գործ, որ մշտական խորհրդածության առարկա էր դարձել մեր երկրի իշխանության համար»[1]։ Միաժամանակ ավելացնում էր, որ «գյուղական բոլոր հողերը պետք է չափվեն և զանազան դասակարգերի բաժանվեն հատուկ հանձնաժողովների միջոցով»[2]։

Լիբերալները դրականորեն գնահատեցին կառավարության նաև 1900 թ. հունիսի 12-ի հարկային օրենքը, որով թեև հարկի տակ էին դրվում նաև կալվածատերերն ու այլ արտոնյալ դասերը, բայց միաժամանակ մեծապես խստացվում էին գյուղացիության հարկային կեղեքումները։ Անտեսելով այդ հանգամանքը, իր առաջնորդողում «Մշակը» գրում էր. «Օրենքը խելացի և արդար սկզբունքի վրա է հաստատված»[3]։

1905 թ. հեղափոխության օրերին, երբ ստեղծվեց ռուսական լիբերալ բուրժուազիայի կադետական կուսակցությունը, հայ լիբերալները նույնպես պատրաստվեցին հիմնել իրենց կուսակցությունը՝ հենց նրա սկզբունքներով ու նպատակներով։ Այդ առթիվ «Մշակը» գրում էր. «Մենք հարում ենք սահմանադրական-ռամկավարական կուսակցության և ցանկանում ենք ամբողջ Անդրկովկասի համար համերկրային ինքնավարություն»[4]։ Շուրջ մեկ տարի անց՝ 1906 թ. նոյեմբերին հրավիրվեց հիմնադիր ժողով՝ Հ. Առաքելյանի նախագահությամբ։ Ժամանակավոր բյուրոյի անդամներ ընտրվեցին Ալ. Քալանթարը, Մ. Աթաբեգյանը, Ք. Վերմիշյանը, Կ. Ստեփանյանը, Հ. Հա-

---

1 «Մշակ», 1900, № 98, էջ 1։

2 Նույն տեղում։

3 «Մշակ», 1900, № 127, էջ 1։

4 «Մշակ», 1905, № 229։

ությունյանը, Հ. Սպենդիարյանը, Հ. Առաքելյանը և ուրիշներ։ Նրանք հանդես եկան հայտարարությամբ, որի մեջ նշում էին, որ իրենց նորաստեղծ կուսակցությունը ընդունելու է կադետների ծրագրի սկզբունքային կետերը։ Սակայն այդ կուսակցությունը հեղափոխության պարտության ու ռեակցիայի սաստկացման պատճառներով չստեղծվեց։ Այնուամենայնիվ հայ լիբերալները, համերաշխվելով կադետների հետ, գտնում էին, որ հողային հարցը պետք է լուծել նրանց ծրագրով, այսինքն՝ սակավահող ու հողազուրկ գյուղացիներին հող տալ պետական, թագավորական, վանական և կալվածատիրական տիրույթների մի մասի հարկադիր վաճառքի կամ օտարացման միջոցով, ընդ որում այդ օտարացումը պետք է այնպես կատարել, որ դրանք չքայքայվեն։ Կադետները գտնում էին, որ անհրաժեշտ է ստեղծել պետական հողային ֆոնդ, որից, անհրաժեշտության դեպքում, բաժին տրվեր կարիքավորներին։ Այնուհետև նախատեսում էին կազմակերպել պետական լայն օգնություն ռուս վերարնակիչներին, «կանոնավորել» վարձակալական հարաբերությունները և այլն[6]։

Բայց ի տարբերություն կադետների, հայ լիբերալները հանդես էին գալիս հանուն գյուղական համայնքի պաշտպանության։ Այսպես. երբ ցարական կառավարությունը 1906 թ. նոյեմբերի 9-ին օրենք հրատարակեց գյուղական համայնքի քայքայման մասին, «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարը մերժեց այն, գրելով. «Մենք տարիների ընթացքում պաշտպանել ենք գյուղական համայնքի գաղափարը և այսօր ևս ընդգծում ենք մեր այդ հայացքը։ Մենք գյուղական համայնքի մեջ տեսել ենք մի զորեղ գործոն, թե՛ ներկայի և թե՛ ապագայի համար»[7]։ Ապա նա նշում էր, որ համայնքը, անշուշտ, ունի թերություններ։ Պիտի վերացնել հենց այդ թերությունները, բայց ոչ համայնքը, քանզի միայն այն է ապահովում գյուղացիների բարեկեցությունը։

Հայ լիբերալները պայքարում էին ֆեոդալական մնացուկների վերացման և կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ 1905 թ. նրանք երկրամասի 24 շրջանների բնակչության անունից դիմեցին փոխարքային, ի թիվս այլ խնդիրների բարձրացնելով նաև գյուղացիական հարցը, պահանջելով, որ պետությունը միջոցներ տրամադրի մասնատիրական գյուղացիներին, որպեսզի նրանք կարողանան փրկագնել իրենց հողաբաժինները և ազատվեն, այսպես կոչված, ժամանակավորապես-պարտավոր վիճակից։ Ապա խնդիր էին դնում, որ գյուղացիական բանկը այդ գյուղացիներին բաց թողնի գումարներ, որպեսզի նրանք կարողանան փրկագնել կալվածատերերից իրենց վարձակալած հողերը։ Լիբերալները հարկ էին համարում նշել, որ այդ միջոցները պետք է տրվեն գյուղացիներին որոշակի ժամանակով, հետագայում դրանք տոկոսներով ետ ստանալու պայմանով։ Վերջապես, նրանք պահանջում էին փոխարքայից թույլ տալ սակավահող ու հողազուրկ գյուղացիներին հաստատվելու պետական ազատ հողերի վրա և նպաստել, որ նրանք հեշտությամբ օգտվեն պետական անտառներից, արոտավայրերից և այլ տարածություններից[8]։

«Մշակը» գոհունակությամբ արձագանքեց 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքին, որով դադարեցվում էին Անդրկովկասում «ժամանակավորապես պարտապան» հարաբերությունները, և գյուղացիները հնարավորություն էին ստանում փրկագնելու իրենց հողաբաժինները, դառնալու սեփականատերեր։ Նրա թղթակիցներից մեկը հանդես եկավ «Ճորտատիրության վերացումը»

---

5 Տե՛ս «Մշակ», 1906, № 251, էջ 1։

6 Տե՛ս Русские политические партии и их программы. Петроград, 1917

7 «Մշակ», 1906, № 252, էջ 1։

8 Տե՛ս «Մուրճ», 1905, № 5, էջ 244, «Դրոշակ», 1905, № 6, էջ 90։

հոդվածով, որի մեջ հիշյալ օրենքը համարում էր գյուղացիության չարքաշ կյանքում կարևոր փոփոխություն և կշտամբում էր հայ պարբերականներին, որ այդ օրենքի մասին դեռ չեն տվել ընդարձակ տեղեկություններ[9]։

Քիչ ուշ՝ 1913 թ. փետրվարի 13-ին «Մշակում» Ալ. Քալանթարը 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքի մասին հրապարակեց ընդարձակ հոդված, որտեղ օրենքը բնութագրեց որպես «խոշոր մի բարեփոխություն գյուղացիական տնտեսավարության մեջ»[10]։ Ու թեև նա այնքան ուշացավ ու ձգձգվեց, որ «կորցրեց իր բարոյական նշանակությունը և իրականացավ այնպիսի ձևով, որ ներկա ժամանակի համար հանդիսանում է իբրև շատ թերի ու անկատար», այնուամենայնիվ «...մեր ազգաբնակչությունը ... գոհ է, ...որ գոնե այսօր ազատվում է միջնադարյան վիրավորիչ կարգերից»։ Հոդվածագիրը, այնուհետև, նշում էր, որ ֆեոդալական կապանքներից պիտի ազատել նաև Դաղրստանի և երկրամասի այլ շրջանների «ժամանակավորապես պարտապաններին»։ Եվ այն ժամանակ միայն «...մեր երկրի գյուղացիությունը կազատվի հողատիրական կաշկանդումներից, որոնք չլատեցին մարդկանց նախաձեռնական գործունեությունը, խեղդեցին ձեռնարկու ոգին և դրոշմեցին մեր գյուղական ազգաբնակչության վրա ստրկության, անինքնուրույնության, կրավորականության կնիքը»[11]։

Բայց Ալ. Քալանթարը լռում էր այն մասին, թե կառավարությունը նյութական ինչպիսի զոհողությունների ենթարկելով էր ազատում գյուղացիներին ֆեոդալիզմի բեռից, ինչպես էր նրանց զոհաբերում ու ծառայեցնում կալվածատերերի շահերին, չէր ցույց տալիս, որ կառավարության այդ քաղաքականության հետևանքով գյուղացիները դեռ երկար ժամանակ պիտի մնային իրենց նախկին վիճակում։

XX դարի սկզբին ագրարային հարցը լայնորեն քննարկվեց նաև լիբերալ մի այլ պարբերականի՝ «Մուրճի» էջերում։ Նրա խմբագիր Լ. Սարգսյանը անդրադառնալով 1861 թ. ռեֆորմին, փառաբանում էր այն, համարում նույնիսկ հեղափոխություն և մեծարում Ալեքսանդր II-ին, հռչակելով նրան գյուղացիների ազատարար։ Բայց ցավում էր, որ Անդրկովկասի գյուղացիությունը դեռ մնում էր կախված աղաներից ու խաներից և հույս էր հայտնում, որ ժամանակի ընթացքում կայսրության այս մասում ևս գյուղացին կազատվի միջնադարյան կապանքներից[12]։ Հեղինակը, այնուհետև, անդրադառնում էր գյուղացիների հողաբաժինների հարցին և նշում, որ եվրոպական Ռուսաստանում յուրաքանչյուր շունչ ունի 3—5 դեսյատին, մինչդեռ Արևելյան Հայաստանում կամ, ինչպես ինքն էր գրում, Երևանի նահանգում ու Կարսի մարզում՝ 0,7—0,9 դես.։ Ապա եզրակացնում էր, որ այդ սակավահող գյուղացու տնտեսությունը «չի կարող արդյունավոր լինել»[13]։

Պարբերականի խմբագիրը խնդիր էր դնում, որ հողը պատկանի ոչ թե խաներին ու բեգերին կամ զանազան սպեկուլյանտներին, այլ նրա մշակողին, այսինքն՝ գյուղացուն, իսկ դրա համար պետք է ստեղծել անհրաժեշտ դյուրություններ[14]։ Այլ կերպ ասած՝ պահանջում էր վերացնել ֆեոդալականը և ընդարձակել գյուղացիական հողատիրությունը։

Լիբերալների այս օրգանն ագրարային հարցն ավելի լայնորեն քննարկեց 1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանում։ Լ. Սարգսյանը հանգամանորեն նկարագրում էր Անդրկովկասի գյուղացու ծանր դրությունը, ցույց տալով, որ նա սակավահող է, հողազուրկ է, հսկայական գումարներով հող է վարձակալում աղնվականներից ու բեգերից, տնքում է պետական ու կալվածատիրական հարկերի և զանազան վճարումների տակ, խեղճ ու աղ-

9 Տե՛ս «Մշակ», 1913, № 17, էջ 3։

10 «Մշակ», 1913, № 26, էջ 1։

11 Նույն տեղում։

12 Տե՛ս «Մուրճ», 1901, № 3, էջ 224—225։

13 Նույն տեղում, էջ 225—226։

14 Տե՛ս «Մուրճ», 1901, № 9, էջ 223։

քատ է, տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց է, պայքարում է աղատության համար և այլն։ Այդ ամենը ցույց է տալիս, որ «քառասուն տարի առաջ հայտարարված ճորտերի ազատությունը մի կիսատ-պռատ ռեֆորմ էր, որ չէր ապահովում գյուղացու տնտեսական անկախությունը ազնվականներից և չէր բանում նրա առաջ քաղաքակրթության բարիքները»[15]։

«Մուրճի» խմբագիրը ողջունեց փոխարքայության վերականգնումն Անդրկովկասում, հայտարարելով՝ «Ուրեմն բացվում է այն նոր կյանքի արշալույսը, որին անհամբեր սպասում է Կովկասը»[16]։ Նա որոշակի հույսեր կապեց նաև հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հետ, բայց չտեսնելով նրա շոշափելի արդյունքները, հիասթափվեց։ Լ. Սարգսյանը քննադատում էր կառավարությանը, որը խոստանալով դեմոկրատական միջոցառումներ, չկենսագործեց դրանք, մերժում էր ծայրահեղականներին, որոնք խնդիր էին դրնում, թե պրոբլեմները պետք է լուծել հեղափոխության միջոցով և գտնում էր, որ երկիրը պիտի առաջ ընթանա բնականոն էվոլյուցիոն ճանապարհով՝ սահմանադրական-ժողովրդական ազատության կուսակցության, այսինքն՝ կադետների գլխավորությամբ[17]։

«Մուրճում» հողային հարցի մասին ավելի ընդարձակ հոդվածաշարով հանդես եկավ գյուղատնտես Ե. Սարգսյանը։ Նա նույնպես նշում էր, որ «Ռուսաստանում հողային հարցը առաջացել է 1861 թ. ռեֆորմի հետևանքով, երբ կալվածատերերի ձեռքին մնացին ընդարձակ տարածություններ, իսկ գյուղացիների մեծ մասը դարձավ սակավահող ու հողազուրկ։ Կառավարությունը փորձում է լուծել այդ հարցը գյուղացիության մի մասի վերաբնակեցման կամ գյուղացիական բանկից կարիքավորներին միջոցներ տրամադրելու և այլ ճանապարհներով, սակայն արդյունքի չի հասնում։ Ընդհակառակը՝ այդ քաղաքակրթությամբ ավելի է վատթարացնում տեղացիների դրությունը։ Հեղինակը գտնում է, որ գործին չի օգնում նաև արքունական ու թագավորական ընտանիքին պատկանող հողերի հանձնումը գյուղացիներին, որովհետև դրանց մեծ մասը անպետք է գյուղատնտեսության համար, իսկ մնացածը քիչ է։ Մնում է մի ելք՝ կալվածատիրական հողերի հարկադրաբար օտարումը և դրանց հանձնումը գյուղացիներին։ «Այսպես, ուրեմն,— եզրափակում է նա,— ինչպես ուզում եք շուռ ու մուռ եկեք, պետք է գաք այն եզրակացության, որ առանց այդ հողերի անկարելի է գոհացում տալ գյուղացիների սակավահողությանը»[18], «...առանց մասնավոր սեփականություն կազմող կալվածների ստիպողաբար անջատման (принудительное отчуждение) անկարելի է վճռել հողային հարցը Ռուսաստանում»[19]։

Ե. Սարգսյանը, այնուհետև, հարցեր է դնում՝ արդյո՞ք բոլոր մասնավոր կալվածները պետք է բռնագրավվեն, թե՞ մի մասը, եթե մի մասը, ո՞ր մասը, այդ մասը պետք է վերցնել ձրի՞, թե՞ հատուցումով, ու՞մ սեփականությունը պետք է դառնան վերցրած հողերը և ինչպես պետք է բաժանվեն նրանք գյուղացիների միջև։ Նրա կարծիքով, այդ բոլոր հարցերին ամենալավ պատասխանը տալիս է սահմանադրական ռամկավարների կամ կադետների ծրագիրը, որը սահմանում է, թե պետք է պետական միջոցներով ստիպողաբար ետ գնել ուղելային, կաբինետային (կայսրական տոհմին պատկանող), եկեղեցապատկան և մասնատիրական հողերը, կազմել դրանցից պետական հողային ֆոնդ և այն առանձին կտորներով հանձնել հողազուրկ ու սակավահող գյուղացիներին ու բատրակներին երկարատև վարձակալությամբ՝ առանց վարձու աշխատանք օգտագործելու կամ ուրիշին տալու պայմանով։ Ծրագիրը պահանջում էր, որ պետք է անձեռնմխելի թողնել այն հողերը, որոնք մշակվում են տերերի սեփական աշխատանքով, որոնց

15 «Մուրճ», 1905, № 4, էջ 216։
16 Նույն տեղում, էջ 224։
17 Նույն տեղում, 1906, № 1, էջ 165—173։
18 «Մուրճ», 1906, № 4—5, էջ 112։
19 «Մուրճ», 1906, № 6, էջ 108։

վրա կառուցված են գործարաններ ու ֆաբրիկաներ կամ որոնք հատկացված են շաքարի և օղու հումքին[20]։

Եր. Սարգսյանն այդ ամենը համարում էր ժամանակավոր լուծում։ Բայց բնակչության մշտական աճը պահանջում էր նորանոր տարածություններ։ Ուստի հողային խնդրի վերջնական լուծման համար, նշում էր նա, պիտի լուրացնել նոր տարածություններ, ոչ պիտանի հողերը դարձնելով պիտանի և բարձրացնել մշակվող հողի արտադրողականությունը, ներդնելով գյուղատնտեսական առաջադեմ ու կատարելագործված եղանակներ։ Դրա համար անհրաժեշտ է նախապես նորոգել «Ռուսաստանի փտած ու նեխված մրթնոլորտը»[21]։

Հեղինակը եզրակացնում էր, որ «միայն քաղաքականապես ազատ գյուղացին է կարող ավելի ռացիոնալ և կատարյալ տնտեսությունով պարապել։ Ուրեմն, պետք է վերացնել բոլոր այն սահմանափակումները, որոնք ճնշում են գյուղացուն մի կողմից իբրև ռուսաց քաղաքացու, իսկ մյուս կողմից՝ իբրև գյուղացու ... տվեք գյուղացուն «ազատություն և հող» և նա կիմանա իր անելիքը»[22]։

Ընդհանրապես պետք է նշել, որ ինչպես «Մշակը», այնպես էլ «Մուրճը»[23] նկարագրում էին գյուղացիների աղքատությունը, հարստահարումն ու հալածանքը իշխանությունների և ունևոր վերնաշերտերի կողմից, ցույց էին տալիս նրանց տնտեսության հետամնացությունը, գործիքների պրիմիտիվ վիճակը, բայց ելքը տեսնում էին ոչ թե արմատական հեղաբեկումների, այլ բարելավումների՝ կատարելագործված գործիքների ներդրման, գյուղատնտեսական նոր կուլտուրաների ներմուծման, առաջավոր եղանակների կիրառման, մասնագետների պատրաստման, գյուղական մտավորականության բարեկրթման, համայնքի մարտունակության բարձրացման, բռնությունների և անարդարությունների վերացման կամ սանձահարման մեջ։

Ցարական ինքնակալության տապալումից հետո 1917 թ. ապրիլին հայ լիբերալները Թիֆլիսում ստեղծեցին իրենց «Հայ ժողովրդական կուսակցությունը», որը մշակեց ու հրապարակեց իր ծրագիրը[24]։ Այդ ծրագրի ագրարային մասում ասվում էր. «Սակավահող և անհող գյուղացիների, ինչպես և մանր տնտեսություն վարող այլ անձերի հողային կարիքը լրացնելու համար պետք է հատկացնել պետական, ուդելների, կաբինետային, վանքապատկան, եկեղեցապատկան, գյուղական և ազնվականական բանկերին պատկանած հողերը, նույնպես և ժամանակավոր սեփականատերերի ... հողերը՝ աշխատավորական նորմայից բարձր, որոնք ենթակա են ստիպողական գրավման։ Ստիպողական գրավման չեն ենթարկվի մանր կալվածները, որոնք աշխատավորական նորմայից բարձր չեն, զեմստվային և այլ հիմնարկությունների հողերը, որոնք սահմանված են կրթական, առողջապահական, գիտական և այլ հանրօգուտ նպատակների համար, նույնպես և ագարակները, պարտեզները, այգիները, բանջարանոցները և գործարանների տակ եղած հողերը»[25]։

Այնուհետև ծրագրում նշվում էր, որ աշխատավորական նորման պիտի սահմանել յուրաքանչյուր շրջանում առանձին, ելնելով տեղի հողային հնարավորություններից։ Պետական հողերը հանձնվում են կարիքավոր գյուղա-

---

20 Նույն տեղում, էջ 111—116։

21 «Մուրճ», 1906, № 9, էջ 131։

22 Նույն տեղում, էջ 132։

23 «Մուրճի» մասին հանգամանորեն տե՛ս Լիդա Գևորգյան. «Մուրճ» ամսագիրը. Երևան, 1982։

24 Այդ կուսակցության մասին հանգամանորեն տե՛ս Д. С. Хечумян. Критический анализ идеологии и политики Армянской народной партии (1917—1921 гг.), Ереван, 1987 (автореферат кандидатской диссертации).

25 «Մշակ», 1917, № 220, էջ 3։

ցիներին անժամկետ, մշտապես օգտվելու համար, իսկ կալվածատիրական կամ մասնատիրական հողերը պետք է գնվեն պետական միջոցներով՝ արգարացի, այսինքն՝ ոչ շուկայական գներով։ Արոտավայրերն ու անտառները պիտի տրվեն տեղական կարիքավոր գյուղացիներին՝ ըստ սահմանված նորմայի, իսկ ավելորդը կամ կպահվի իրրև պաշար՝ ապագա լրացումների համար, կամ կհատկացվի վերաբնակիչներին։ Ծրագիրը պահանջում էր վերացնել բատրակների վարձման կարգը և բանվորական օրենսդրությունը տարածել նաև գյուղատնտեսական մշակների վրա։ Այն խնդիր էր դնում կազմակերպել պետական լայն օգնություն գյուղացիներին, պետական միջոցներով անջրդի հողերի ոռոգում, հողի վարձակալական պայմանների բարվոքում, վարձակալական գների իջեցում[26]։

Ինչպես տեսնում ենք, «Հայ ժողովրդական կուսակցության» ագրարային ծրագիրն ամբողջությամբ ընդօրինակված էր կադետների ծրագրից։ Եվ դա պատահական չէր. այն իրեն համարում էր «ռուսական կադետական կուսակցության հայկական ճյուղը», ընդգծելով միաժամանակ, որ ինքը «միայն ռուսահայերի կուսակցությունն է»[27]։

Հայ իրականության մեջ ագրարային հարցի լուծման ծրագրերով հանդես եկան նաև դաշնակցականները։ Իրենց առաջին ծրագրում՝ հրատարակված դեռ 1892 թ. օգոստոսին, նրանք հայտարարում էին. «Մենք կաշխատենք ստեղծել համայնական սեփականություն....», հասկանալով դրա տակ, իհարկե, նաև հողի համայնացումը, կաշխատենք «տալ չունեցողին հող և ապահովել մշակողին հողից օգտվելու կարելիություն», կաշխատենք վերացնել կոռն ու բեգարը և տուրքերը բաշխել դարերից ի վեր գործող և հավասարություն ապահովող «համփաշարեք» սկզբունքով, կաշխատենք «ուժ տալ գյուղացու և արհեստավորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերվարական հիմունքները, ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրա տեղական և պատմական հանգամանքների ազդեցության տակ»[28]։ Դաշնակցականների այդ թեզերը, անշուշտ, ուղղված էին հողի մասնավոր սեփականության կամ տիրապետման դեմ և նպատակ ունեին վերացնելով ֆեոդալական շահագործումը, հողօգտագործման հին ձևերի մեջ ներդնել նոր բովանդակություն։

Սակայն դաշնակցականներն իրենց հողօգտագործման սկզբունքները ավելի ընդարձակ ու հիմնավոր շարադրեցին 1907 թ. IV համագումարում ընդունած ծրագրում։ Նրանք հայտարարում էին, որ անհրաժեշտ է հողը համայնացնել՝ ամբողջ ժողովրդի սեփականությունը դարձնելով արքունական, կալվածատիրական, կրոնական հաստատությունների և այլ մասնավոր տարածությունները։ Պետք է արգելել հողի առքն ու վաճառքը, իսկ նրանից օգտվելու իրավունքը տալ աշխատավորներին, պայմանով, որ «յուրաքանչյուր աշխատավոր իրավունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանա առանց ուրիշի աշխատանքը շահագործելու բավարարություն՝ տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներին»[29]։ Այնուհետև ծրագրում նշվում էր, որ գյուղական ու քաղաքային համայնքներն իրենք կորոշեն հողի տնօրինման և նրանից օգտվելու եղանակները, իսկ կենտրոնական ու շրջանային վարչությունները պարբերական հողաբաժանումների միջոցով կսահմանեն հողի միջշրջանային ու միջհամայնական հավասարեցումները։ Համայնական ընդհանուր նշանակություն ունեցող անտառները, արոտավայրերը, ջրերը և այլն և դրանցից ստացվող եկամուտների բաշխումը հանձնվում են համայնքից ընտրված մարմինների կարգադրությանը։ Այդ եկամուտները պետք է հատկացնել համայնքի կուլտուրական ձեռնարկում-

---

26 Տե՛ս «Մշակ», 1917, № 220, էջ 3։

27 «Մշակ», 1917, № 200։

28 «Դրոշակ», 1894, № 11, էջ 2։

29 Հ. Հ. Դաշնակցության ծրագիր. Կ. Պոլիս, 1908, էջ 20—21։

ներին։ Անհրաժեշտ է վերացնել ֆեոդալական վճարումները (օլամը կամ բեգարը, բահրան և այլն), սահմանել պրոգրեսիվ հարկ, իսկ աղքատներին ազատել տուրքերից։

Դաշնակցականների ինչպես 1892 թ., այնպես էլ 1907 թ. ծրագրերը, հատկապես ագրարային դրույթներն ընդօրինակված էին արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական, ռուսական նարոդնիկական, մանավանդ էսէռական կուսակցությունների, կազմակերպությունների ու խմբերի ծրագրերից։ Նրանք էսէռների նման իդեալականացնում էին մանր գյուղացիական տնտեսությունները, համարում էին դրանք կայուն, գտնում էին, որ դրանք կարող են պայքարել կապիտալիզմի դեմ։ Դաշնակցականները չէին ընդունում գյուղացիության մանր բուրժուական բնույթը, նրա դասակարգային ներհակությունները և առաջադրում էին հողի սոցիալիզացիան։

Կուսակցության IV համագումարից հետո դաշնակցականները սկսեցին լայնորեն պրոպագանդել իրենց ագրարային ծրագիրը։ Այդ գործում նրանց օգնեցին իրենց էսէռ գաղափարակիցները։ Աչքի ընկավ հատկապես Վ. Լունկևիչը, որը Հ. Արարատսկի ծածկանունով 1907—1908 թթ. «Դրոշակում» հանդես եկավ «Սոցիալիստի նամակները» հոդվածաշարով, որոնցում հանգամանորեն նկարագրում էր այն փոփոխությունները, որոնք պիտի կատարվեին երկրում իրենց ծրագրի իրագործման հետևանքով։ Վերջում հեղինակը եզրափակում էր, որ գյուղում գոյություն ունեցող բոլոր չարիքները կչքանան «միայն սոցիալիզմի տիրապետությամբ»[30]։

Դաշնակցությունը ծավալեց նաև ագրարային պրակտիկ գործունեություն։ 1905 թ. փետրվարին Թիֆլիսում «Ռուսաց սոցիալ-հեղ. կուսակցություն», «Լեհական սոցիալիստ կուսակցություն», «Հայ հեղափոխականների դաշնակցություն», «Ֆինլանդիայի կուսակցության գործոն դիմադրություն», «Վրաց սոցիալ-դեմոկ. միություն», «Բելոռուսական սոցիալիստ Գրոմադա» կուսակցությունների ներկայացուցիչները որոշեցին համատեղ ու միասնաբար պայքարել ցարիզմի դեմ։ Նրանց հայտարարության մեջ խոսք կար նաև հողային հարցի մասին, որը շեշտում էր, թե պետք է համայնացնել հողը և դնել այն «հասարակության, աշխատավոր, երկրագործ ազգաբնակչության տրամադրության տակ», թե այդ քայլն ամեն մի կուսակցություն պետք է կատարի, ելնելով իր երկրի կոնկրետ պայմաններից[31]։

1906 թ. նոյեմբերին դաշնակցության Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն Անդրկովկասի գյուղացիությանը կոչ էր անում պայքարել իր հարստահարողների դեմ, պայքարել համախմբված ու կազմակերպված. «Տանջվողները պետք է ձեռք մեկնեն իրար և ուժգին հարված տան թշնամուն»[32]։

Ռուսաստանի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներին դաշնակցության ներկայացուցիչներն ամրացան երկրամասի, հատկապես Արևելյան Հայաստանի մի շարք գյուղերում և փորձեցին նրանց կառավարումը վերցնել իրենց ձեռքը։ Նրանք միջամտեցին հողաբաժինների վերաբաժանումների ու տուրքերի վճարման գործերին։ 1907 թ. «Դրոշակի» խմբագրությունը Շտուտգարտի կոնգրեսին ներկայացրած իր տեղեկագրում նշում էր, որ կուսակցությունը «Շատ մը գավառներու, մանավանդ Գանձակի և Երևանի նահանգներու մեջ, բաշխել տվավ համայնական հողերը հօգուտ հարստահարված փոքր հողագործներու մեծ մասին։ Այս հողաբաժանումը քսան տարիե ի վեր չէր կատարվեր հարուստ և ազդեցիկ գյուղացիներու դիմադրության շնորհիվ։ Մեր գավառական կազմակերպությունները կանոնավոր, երբեմն բուռն, կռիվ մղեցին սեփականատերերու դեմ և շատ մը գավառներու մեջ գյուղացիները տասանորդ չվճարեցին»[33]։

---

30 «Դրոշակ», 1908, № 2, էջ 23։

31 Տե՛ս «Դրոշակ», 1905, № 5, էջ 69։

32 «Դրոշակ», 1906, № 12, էջ 182։

33 «Դրոշակ», 1907, № 9, էջ 136։

Հնչակյան կուսակցությունը իր ագրարային ծրագիրը հրատարակել էր դեռ 1887 թ.[34], և որոշակի փոփոխություններով վերահրատարակել 1909 և 1910 թթ.[35]։ Սակայն նրա ծրագրերը վերաբերում էին Արևմտյան Հայաստանին։ Ճիշտ է, XX դարի սկզբին հնչակյանների որոշ խմբեր միացան ՌՍԴԲԿ-ին, բայց դրանք ոչ թե մշակեցին իրենցը, այլ ընդունեցին ՌՍԴԲԿ ծրագիրը, այդ թվում նաև ագրարային դրույթները։

Հնչակյանները քննադատում էին ցարական կառավարության հողային օրենքները և պաշտպանում գյուղացիության շահերը։ Այսպես, 1907 թ. «Հնչակի» ժանիք ծածկանունով թղթակիցը մերկացնում էր կառավարության 1905 թ. հոկտեմբերի 5-ի հրամանագիրը, որով ազդարարվում էր, թե գյուղացիները կարող են հող ձեռք բերել գյուղացիական բանկի օգնությամբ և հայտնում էր այն կարծիքը, որ «գյուղական խնդիրը իր բավարար լուծումը կստանա այն ժամանակ, երբ գյուղական պրոլետարիատը կհարե սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային պահանջներին, գյուղացին միացնելով իր ուժը քաղաքային բանվորական կազմակերպված ուժին՝ մի անգամ ընդմիշտ վերջ կտան ցարի կառավարությանը»[36]։

1905 թ. հեղափոխության օրերին հնչակյանները նույնպես ծավալեցին պրակտիկ գործունեություն, իրենց ներկայացուցիչներն ուղարկելով Անդրկովկասի, հատկապես Երևանի նահանգի ու Կարսի մարզի հայաբնակ գյուղերը։ Բայց նրանք, աշխատելով ամրապնդել իրենց ազդեցությունը գյուղացիության վրա, հանդիպում էին դաշնակցականների դիմադրությանը։ Այդ հողի վրա երկու կուսակցությունների միջև հաճախ տեղի էին ունենում բախումներ։

1907 թ. ամռանը, սոցիալիստական կոնգրեսի որոշմամբ, «Հնչակը» հրապարակեց հարցարան, որի համաձայն կուսակցության տեղական կոմիտեները պետք է ուսումնասիրեին «Գյուղական հասարակությունը և երկրագործական խնդիրները» պրոբլեմը։ Նրանք հավաքելու էին տվյալներ հողատիրության ձևերի, չափերի, դրանց զարգացման ու քայքայման, հողի գնի շարժման, կալվածատիրական ու վանական տնտեսությունները վարելու եղանակների, նրանցում հարկադիր ու վարձու աշխատանքի կիրառման, անհատական ու համայնական հողատիրության, գաղթականության ու տարագնացության, երկրագործական գործիքների ու մեքենաների, հողի պարարտացման, գրավ դնելու, առք ու վաճառքի, գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման, բատրակների, կանանց ու երեխաների դրության, դասակարգային պայքարի, քաղաքական կուսակցությունների գործունեության, կուլտուր-կրթական հաստատությունների ու աշխատանքների, պետական միջոցների հատկացումների և այլ հարցերի մասին[37]։ Անշուշտ, այդ նյութերը անգնահատելի աղբյուրներ կլինեին հայկական գյուղի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վիճակի ուսումնասիրության համար։ Բայց, ցավոք, դրանք չհավաքվեցին։

«Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» (սպեցիֆիկներ), լինելով բանվորական կուսակցություն, չուներ ագրարային ծրագիրը։ Սակայն տարբեր առիթներով անդրադառնում էր հողային հարցին և կարծիք հայտնում։ Այսպես, 1905 թ. կազմած իր ծրագրի նախագծում, որը վերցված էր գերմանական, ռուսական և այլ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերից, ասվում էր, որ միայն արտադրության միջոցները, այդ թվում նաև հողը հասարակության սեփականություն դարձնելով

---

34 Տե՛ս Հնչակյան կուսակցության ծրագիր. 1887 թ. (Հրատարակության տեղը ու թիվը չեն նշվում)։

35 Տե՛ս Ծրագիր սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (Տաճկաստանի համար). Կ. Պոլիս, 1912։

36 «Հնչակ», 1907, № 1, էջ 11։

37 Տե՛ս «Հնչակ», 1907, № 7, էջ 86—88։

կարելի է վերացնել աղքատությունն ու թշվառությունը, սակայն չէր նշվում, թե ինչպես պետք էր օգտագործել հողը[38]։

Սպեցիֆիկները գտնում էին, որ «հողազուրկ գյուղացիություն կամ գյուղատնտեսական պրոլետարիատ մեր գյուղական իրականության մեջ չկա»[39], բայց նկարագրում էին գյուղացիության ծանր գրությունը, սոցիալական շերտավորումը, հարուստների, միջակների ու աղքատների առկայությունը։ Դատափետելով հարուստների չարագործությունները, նրանք հայտնում էին այն կարծիքը, որ «ժողովուրդը միայն այն ժամանակ կհանգստանա, երբ այդպիսի տզրուկները նրա միջից կհեռանան»[40]։ Իսկ դրա համար կոչ էին անում՝ «թշվառ ամբոխ, արթնացիր»[41]։

Այդ կոչի տակ սպեցիֆիկները հասկանում էին գյուղացիական միությունների ստեղծումը, տնտեսական գործունեության ծավալումը, առաջավոր եղանակների ներդնումը, արտադրողական ու սպառողական կոոպերացիաների կազմակերպումը, քաղաքական ելույթների ձեռնարկումը և այլն։ «Շեփորի» Դյուքի կեղծանունով թղթակիցը գրում էր. «Ընկեր գյուղացիներ, ժամանակն է կազմակերպվելու, միայն աշխատավորական, գյուղացիական միությունները կարող են ձեզ ազատել զանազան վաշխառու-տանուտիրական ոտնձգություններից»[42]։

Արևելահայ հողային հարցի լուծման համար դեմոկրատական ծրագիր ունեին նաև հայ բոլշևիկները։ Սակայն նրանց ծրագրին այստեղ չենք անդրադառնա, քանի որ այն լուսաբանել ենք մեր հոդվածներում[43]։

Այսպիսով, ինչպես լիբերալ, այնպես էլ դեմոկրատական կուսակցությունները ձգտում էին բարելավել արևելահայ գյուղացիության դրությունը։ Նրանք գտնում էին, որ այդ բարելավումը կարելի է կատարել հիմնականում գյուղական համայնքի միջոցով, ուստի հանդես էին գալիս նրա պաշտպանությամբ պրոպագանդայով։ Կուսակցությունները գտնում էին, որ գյուղացիության դրության բարելավման համար անհրաժեշտ է նաև վերացնել գյուղի հետամնացությունը, բռնություններն ու հարստահարությունները։ Իսկ այդ ամենը կարելի է կատարել հասարակությանը բարեկրթելու, մտավորականության դերը բարձրացնելու, արտադրության առաջավոր եղանակներ ու միջոցներ ներդնելու ճանապարհներով։

Սակայն նշված կուսակցությունների ագրարային հարցի լուծման տեսակետների մեջ կային տարբերություններ։ Եթե լիբերալներն ու դաշնակցականները իրենց ծրագրերում որոշակիորեն ուրվագծում էին, թե ինչպես պետք է լուծել հողային հարցը, ապա սպեցիֆիկները բավարարվում էին ընդհանուր հայտարարություններով, ստվերում թողնելով նրա կոնկրետ

---

38 Տե՛ս Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծ. կազմակերպչական սիստեմը և կանոնադրությունը. 1905, էջ 6։

39 «Շեփոր», 1908, № 1, էջ 4—5։

40 Նույն տեղում, էջ 16։

41 Նույն տեղում, էջ 14։

42 Նույն տեղում, № 14, էջ 15—16։

43 Տե՛ս «Լենինյան ուղիով», 1988, № 8, էջ 90—94։ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 2, էջ 23—30։ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, № 1, էջ 109—117։

լուծման եղանակները։ Ի տարբերություն լիբերալների, որոնք գտնում էին, թե գյուղացիության դրության բարելավումը պիտի կատարվի սահմանադրական միապետության հաստատման, մասնատիրական հողատիրության մի մասի բռնի օտարացման, հողային ազատ ֆոնդի ստեղծման և այն ընակչությանը պարբերարար Գանձնեջու ճանապարհներով, դուշնակցականները պահանջում էին միապետության ոչնչացում, դեմոկրատական կարգերի հաստատում, պետական, կալվածատիրական և ընդհանրապես մասնատիրական հողատիրության վերացում, հողի սոցիալիզացիայի հաստատում, այն անվճար բաժանելով գյուղական համայնքների միջև և պարբերարար անցկացնելով հավասարեցում։

ЛИБЕРАЛЬНЫЙ И ДЕМОКРАТИЧЕСКИЙ ПУТИ РЕШЕНИЯ АГРАРНОГО ВОПРОСА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В НАЧАЛЕ XX ВЕКА

А. А. АМБАРЯН

Резюме

В начале XX в. аграрный вопрос как повсюду в России, так и в Восточной Армении составлял основу общественно-политического движения. Каждая партия выражала интересы своего класса. Армянские либералы, как и русские кадеты, хотели решить этот вопрос в условиях самодержавного строя, а дашнаки—путем свержения царизма и проведения социализации земли, т. е. как русские эсеры. Но все они защищали сельскую общину, считая ее способом спасения крестьянства от социального разорения.